

18917

ՌԻՊ-ի գրադարան № 1.

ԱԻԳՈՒՍ ԲԵԲԵԼ

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ ԵՒ ՀԱՅ-  
ՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

7841

Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ  
ստաջարանով, ծանօթութիւններով եւ  
վերջարանով.

327.3

Բ-41

Բ Ա Գ Ո Ւ

Տպարան Ն. Ա. Երեւանցեանի

1918

Առաջաբան

Մօտ 12—13 տարի առաջ անտիպատրիօտիզմի ու անտիմիլիտարիզմի քարոզը անդադար և վառ գոյներով հնչում էր Ֆրանսիայում: Շարժման գլուխ էր անցել օրուայ հերոս Գուստավ Հերվէն: Նրա ղաւանած վատատիպ անարխիզմը՝ ապստամբ կոչերն ու հակահայրենասիրական զառանցոտ մտքերը, անընդունելի էին ֆրանսիական երկու սոցիալիստական թեւերի՝ զեղիստների և ժօրէսիստների համար: Բայց Հերվէնն յաջողուել էր բանուորութիւնից և զօրքից խմբեր գրաւել իր կողմը: Նա բուռն պայքար էր մղում նաև միջազգային սոցիալիստակ. կոնգրեսներում, ուր, սակայն, ուժեղ դիմադրութեան էր հանդիպում նա սոցիալիզմի համաբաւար ներկայացուցիչների (Բերելի, Կաուցկու, Ֆօլմարի, ժօրէսի, Գեդի, Վայանի, Վանդերվիլդի) կողմից և միայն աննշան սինդիկալիստների կողմից հաւանութիւն էր գտնում:



12233

314-2002

Պատերազմի և հայրենիքի պաշտպանութեան հարցերում վաղեմի Հերվէն կարելի է առանց մազաչափ վերապահումների համարել ուսուսկան նորագոյն բոլշեփի հոգևոր հայրը: Նոյն հակապաշտպանողական (АНТИ-БОРОНЧЕСК.) անփոյթ ու անտարբեր վերաբերմունքը զէպի հայրենիքի վերանգումը վիճակը արտաքին թշնամուց՝ պատերազմի ժամանակ. նոյն ցինիկ ծաղրը դէպի սոցիալիստական կուսակցութիւնների պաշտպանողական, հայրենամտահոյ տեսակէտը: Նրա համար միևնոյն էր, իբրև թէ, լինել Ֆրանսիական հանրապետութեան քաղաքացի թէ գերմանական միապետութեան հպատակ: Եւ եթէ մի դժբաղդ օր գեղիցիկ Ֆրանսիան նուաճումների աւար դառնար Վիլհելմի զօրքի առջև՝ նոյն ինչ վերջինս վտանգ սպառնար համաշխարհային Պարիզին, միևնոյն է Հերվէն, իր ասելով, չպիտի ի գէն կոչէր իր հայրենակիցներին՝ երկիրը պաշտպանելու համար, այլ պիտի պոռար՝ «թող կորչէ պատերազմը, կեցցէ ներքին ապստամբութիւնը կամ քաղաքացիական կռիւը»:

Ճիշտ և ճիշտ մեր օրերի ուսուսկան, տխրափառ բոլշեփցին է դա: Եւ բնորոշ է այն հանգամանքը, որ, ինչպէս

այժմ են գերման իմպերիալիստները հրճում բոլշեփի յաջողութիւններով մեր երկրում, այնպէս էլ առաջ նրանք, հենց ինքը Վիլհելմը՝ խոր բաւականութիւն էին ստանում Հերվէի պոռպագանդի գտած արձագանգներից Ֆրանսիական զօրքի որոշ մասերում:

Իայց Հերվէն մի առաւելութիւն ունի Լենինից: Նրա քարոզածը սոսկ տեսական զառանցանք էր և իրազողութեան ժամանակ չունէր առանձին նշանակութիւն: Լենինը, ընդհակառակը, նոյն բանը քարոզեց պատերազմի ահաւոր բուլէներին, երբ արտաքին թշնամին, նուաճելով երկրից համեզ կտորներ, մահ էր սպառնում մայրաքաղաքին: Դա առաջին: Երկրորդ՝ մինչդեռ հանրապետական Ֆրանսիայի կառավարութիւնը՝ անվասա դարձնելու համար Հերվէի հայրենադաւ քարոզները, նրան տարիներով բանտ նստեցրեց, հանրապետական Բրուսիայի ժամանակաւոր կառավարութիւնը, ընդհակառակը, համբերութեամբ տանում էր լենինական բոլոր վտանգաւոր խաղերն ու փորձերը. իսկ յեղափոխական դեմոկրատիան իր վտուրիւմը միայն խրախուսում էր աւելի ցեմմերվալիքովի ծաղկումը: Ի՞նչ դուրս եկաւ վերջը: Այն, որ

մինչդեռ ֆրանսիական բուլշևիկ Հերվէն դուրս եկաւ բանտից բուրժուական վերածնունդի և թունդ հայրենասէր դարձած, խաչ դնելով իր անցեալի վրայ և այս պատերազմի ընթացքում կատարի պրօպագանդ մղելով գերմանական սրածանիք իմպերիալիզմի դէմ, հերվէիստ Լենինը, ընդհակառակը, տարաւ իր կործանարար գիծը մինչև յաղթութեան կատարը, հայհոյելով իր երբեմնի ուսուցչի՝ Հերվէի, արդի «գաւաճ սնութիւնը» անտիպատրիօտիզմի և անարխօ-սինդիկալիզմի դէմ, Հերվէն, իր հերթին, շատ կծու ու տեղին խարազանում է ուսուցչի հերթին, ծագրելով, որ նրանց դործունէութիւնը իր անցեալի խնթութեան աշխատակ կրկնութիւնն է միայն:

Պէտք է ընդգծել և մեխել յիշողութեան մէջ այն փաստը, որ ֆրանսիական միջավայրում Հերվէի բուլշևիզմը վիժեց փառաւորապէս և անվերադարձ լիքուիդացիայի ենթարկուեց, մինչդեռ ուսուցչի միջավայրում Լենինի հերվէիզմը ծլեց, ծաղկեց և տիրապետութեան դադարվանակէտին հոսաւ: Ինչո՞ւ է այդ չտեսնուած յաջողութեան գօղանիքը, ու սակայն միջավայրի սպեցիֆիկ պայմանների մէջ՝ նրա տնտեսական յետամնացութեան, անկուլտու-

րականութեան և քաղաքացիական անգաստիարակութեան մէջ: Բուլշևիզմը, քերէ բացասական երևոյթ, պէտք է յաջողութիւն ունենար տխուր ու բացասական պայմանների ծոցում:

Սաորև մենք զետեղում ենք համաշխարհային պրօլետարիատի մեծ առջնորդներից և պարագլուխներից մէկի յօդուածը: 1905 թ. հերվէիզմի ծագկած շրջանն էր Ֆրանսիայում: Պատերազմի, հայրենիքի պաշտպանութեան և պրօլետարիատի բռնելիք դիւքի հարցերը հրատապ ու կենդանի շնչտերով արծարծում էին սոցիալիստական մամուլում: Ֆրանսիական սոցիալիստական ժուրնալի («La vie sociale») խմբագրութիւնը՝ Պրետանսէի գլխաւորութեամբ, անկետա էր կազմել այդ հարցերի շուրջը, գիմելով սոցիալիզմի հռչակաւոր ներկայացուցիչներին և խնդրելով նրանցից յօդուածներ: Աւզուստ Բերելի հետևեալ յօդուածը գրուած է այդ ասիթով: Մեր համալաւօր պարագլխի կարծիքը՝ ինտերնացիօնալիզմի և հայրենիքի պաշտպանութեան հարցերի փոխառնչութեան մասին, մահուան դատաւճիռ է համարուել իր ժամանակին ֆրանսիական հերվէիզմի դէմ. իսկ այժմ էլ աւելի թարմ նշանակութիւն ստացած Բերելի կար-

ծիբը նոյնքան մահուան դատաւճիռ է  
 ուստական բօլշեիզմի դէմ: Թող հայ  
 բանուորները լաւ ըմբռնեն իրանց  
 հաշակաւոր առաջնորդի մտքերը, և  
 տեսնեն, թէ ինչպէս լինին և նրա  
 հայ ճետերը ամեն քայլափոխման կեդ-  
 ծում են սոցիալ-դեմոկրատական ուս-  
 մունքը և անդթօրէն շահագործում  
 նրա մեծ ուսուցիչների անունները,  
 հրամայելով մասսաներին անարիտ-  
 տական, ասել է հակասոցիալ-դեմո-  
 կրատական մտքեր:

Բ. Իշխամեան:

## I

Ի՞նչ ենք հասկանում մենք պատ-  
 րիտիզմ խօսքի տակ:

Այն, որ ամեն մի ժողովուրդ, ու-  
 նենալով իր սեփական լեզուն, իր  
 ըրարքերը և սովորութիւնները, իրա-  
 ւունք ունի զարգանալու, որպէս ամ-  
 քողջական օրգանիզմ և ինքնակառա-  
 վարուելու: Պատրիօտ է նա, ով աշ-  
 խատում է ապահովել իր ժողովրդին  
 — որին պատկանում է նա ծաղու-  
 ժով, լ՛իզուով և սովորութիւններով —  
 ամենաբարձր քաղաքակրթութիւնը,  
 յօգուտ ամբողջ մարդկութեան՝ առանց  
 միւս ժողովուրդներին վնաս հասցնե-  
 լու: Եթէ նա (պատրիօտը) հետևում է  
 այդ նպատակին, չհոգալով իր անձնա-  
 կան շահերի մասին, չծառայելով տի-  
 քապետող դասակարգերին, այլ ծառա-  
 յելով յօգուտ բ՛լշեի առանց բացա-  
 ռութեան, ապա նա իրականացնում է  
 ամենաբարձր իդէալը, որը կարող է  
 մարդ իրան ներկայացնել:

Բայց ի՞նչ ենք հասկանում մենք  
 փնտերնացիօնալիզմ խօսքի տակ:

Ոչ թէ ալլութիւնների ճնշում, ոչ  
 թէ ժողովուրդների բռնի ձուլում,  
 այլ խաղաղ կուլտուրական յարաբե-

րութիւնների զարգացում և նպաստում:

Ազգային քաղաքակրթութեան կողքին գոյութիւն ունի նաև միջազգային քաղաքակրթութիւն, որի մէջ իւրաքանչիւր ազգ իւրովսան մասնակցութիւն ունի՝ համապատասխան իր բարոյական և մտաւոր զարգացման: Առևտրական յարաբերութիւնները, գիտական, գեղարուեստական և գրական գործնէութիւնը, գիւտերի և բացումների փոխանակութիւնը—անաբար ժողովուրդների համախմբուած ջանքերի գլխաւոր վաստակը:

Ամեն կարգի առևտրական պայմանագրերի, ծովային և դաշնակցական տրակտատների կտոււրը, ամեն տեսակ կուլտուրական ստացուածքների և քաղաքակրթական նուաճումների փոխանակութիւնը, միջազգային իրաւունքի և բանուորական օրէնսգրութեան զարգացումը, արտասահմանցիների իրաւունքների և պարտականութիւնների հաւասարացումը տուեալ երկրի սեփական քաղաքացիներէ հետ, բոլոր ժողովուրդների մարդասիրական ձեռնարկների զարգացումը և, վերջապէս, ազգերի միջև ծագած կոնֆլիկտների և զանազան թիրիմացութիւնների լուծումը միջազգային կոնֆերենցիա-

ների միջոցով—տարէց-տարի հարթում և բարեփոխում են ժողովուրդների փոխադարձ այդ յարաբերութիւնները:

Այդ ինտերնացիօնալիզմը հարկադրում է սոցիալիստներին եռանդով պայքարել օտար երկրի նուաճումների դէմ, ինչպէս և ազգերի բռնի օտարացման, մաքսային պատերազմների և պատերազմական պատրաստութիւնների դէմ՝ ցամաքի և ծովի վրայ, որովհետև այդ բոլորը լարում է ազգային հակասութիւնները և հնարաւոր զարձնում պատերազմների մշտական սպառնալիքը:

Համաշխարհային պարլամենտը (ատեանը), կազմուած բոլոր քաղաքակիրթ ազգերի ներկայացուցիչներից, որի պարտականութեան պիտի վերապահուած լինի միջազգային յարաբերութիւնների կանոնաւորումը և նրանց ամուր պահպանութեան հոգածութիւնը,—պիտի դառնայ բոլոր երկրների ազգերի սոցիալիստների համախմբուած ջանքերի պսակը:

Եւ այսպէս, պատրիօտիզմն ու ինտերնացիօնալիզմը ոչ միայն չեն հակասում միմեանց, այլ ընդհակառակը, փոխադարձաբար լրացնում են մէկը միւսին՝ յօգուտ և ի բարեք մարդկային քաղաքակրթութեան:

Այդ բոլոր ասածներից պարզ է եհեակեալ հարցերի պատասխանը:

Սոցիալիստները պէտք է ամենուրեք դորձին վերոյիշեալ ուղղութեամբ թէ բանուորական խմբակներում եթէ ժողովներում, թէ մամուլի մէջ եթէ պարլամենտներում:

Թէև ժողովուրդների միջև եղած հակասութիւնները չեն կարող միանգամայն վերանալ, սոցիալիստները, յամենայն դէպս, պէտք է աշխատեն հարթել հետզհետէ այդ հակասութիւնները:

### III

Դժուար է մի քանի խօսքով պարզել սոցիալիստների անելիքը պատերազմի դէպքում:

Եթէ ամենուրեք, ազգաբնակչութեան մէջ և պարլամենտներում, սոցիալիստները տակաւին փոքրամասնութիւն են կազմում, ապա պետութիւնների արտաքին քաղաքականութիւնը առ այժմ կատարում է նրանցից անկախ: Այստեղից ամենայն ահնարեութեամբ հետևում է սոցիալիստների համար այն խնդիրը, որ նրանք պիտի ազդեն այդ քաղաքականութեան վրայ վերոյիշեալ ուղղութեամբ:

Եթէ պատերազմը բռնկուում է սոցիալիստների կամքի հակառակ, վեր-

ջիններս պարտաւոր են հետազօտել նրա պատճառները ամենաանողոք անաչառութեամբ<sup>1)</sup>:

Նրանք պէտք է հրաժարուեն պատերազմի բիզնէն ընդունելուց և կրուեն պատերազմի դէմ բոլոր հնարաւոր միջոցներով այն դէպքում, եթէ պատերազմի նախածոնս զը հանգիստում է իրանց երկրի կառավարութիւնը<sup>2)</sup>: Ընդհակառակը, եթէ նրանց

<sup>1)</sup> Բերելի այդ կարծիքը մի ապտակ է այն բօլշեիների և ցիմմերվալիստների դէմ, որոնք չեն ուզում պատերազմի պատճառը մի կամ միւս երկրի և պատտօխանատութիւնը փաթաթել այս կամ այն կառավարութեան շինքին, այլ վերացականօրէն և հակամարքսիստօրէն յայտարարում են, որ պատերազմի պատճառները համարում են բոլոր իմպերիալիստ երկրները առհա արակ:

Ծան. Բ. Դ.

<sup>2)</sup> Սա էլ մի ապտակ է գերմանական սոցդեմ. մեծամասնութեան (Շայդեմանի Ֆրակցիան) դէմ, որ շարունակ ձայն էր տալիս յօգուտ պատերազմական բիւզնէի, իմանալով հանդերձ, որ պատերազմի տխուր նախածոնսութիւնը պատկանում է գերմանական կառավարութեան: Դեռ պատերազմի նախօրեակին խուստովա՛ ել է նրանց կենտրոնական օրգանը այդ դատը ճշմարտութիւնը: Բայց և այնպէս կուսակցական մեծամասնութիւնը իր դիրքով զաւաճանեց իր մեծ վետերանի և պարագլխի նուիրական աւանդին:

Ծան. Բ. Ի.

կառավարութիւնը ստիպուած է պատերազմ մղել իր ցանկութեան հակառակ, եթէ նա հանդիսանում է պաշտպանտող կողմը, ապա սոցիալիստները չ'պէտք է նրաժարուն իրանց աջակցութիւնը մատուցանելուց<sup>1)</sup> Պատերազմի ժամանակ ամենից շատ սուտում է ժողովուրդը, իսկ կառավարութիւնը՝ ամենից նուազ:

Եթէ պատերազմը ընդունում է նուաճողական ընդթի, ինչպէս Գերմանիայի պատերազմն էր Ֆրանսիայի դէմ 1870 թ., Սեդանի սուտ եղած ճակատամարտից յետոյ, ապա սոցիալիստները պարտականութիւնն է դիմադրել այդ նուաճողական ձգտումներին<sup>2)</sup>:

<sup>1)</sup> Ճիշտ և ճիշտ այդպէս էլ վարուել են դաշնակից երկրների սոցիալիստական կուսակցութիւնները (բացի Ռուսիայից): Նրանք ամենայն իրաւամբ աջակցել են իրանց երկրորդի (Բելգիայի, Ֆրանսիայի, Սերբիայի և այլն) կառավարութիւններին, որովհետև վերջիններս ենթակայ էին գերմանական արշաւանքին և պարտաւար էին աջակցել սեփական արեւելքի պաշտպանութեան գործին:

Ման. Բ. Ի.

<sup>2)</sup> Գա մի նոր բարբոսական — մահացու հարուած է Բերլին կողմից սոցիալիստական Ինտերնացիոնալի յստակ տեսակէտը կեղծող ու խարդախող ցեմմերվալդիստ-բոլշեիկներին (կամ կեղծ-ինտերնացիոնալիստներին) դէմ, որոնք ոչ միայն հրաժարում էին և շարունակում են

Երբ 1870 թ ռուսկուեց ֆրանս-գերմանական պատերազմը, Վ. Լիբկնեխտը և ես ձեռնպահ մնացինք պատերազմական քիւղջէն քուէարկելու ժամանակ: Մինք այդպէս ենք վարուել և ոչ հակառակը, որովհետև իմացել ենք, որ պատերազմը համարւում է Բիսմարկի քաղաքականութեան անխուսափելի հետևանքը, որի դէմ մենք յամառնորէն պայքարում էինք: Մենք համոզուած էինք, որ Հոնէնցօլլիերնի թիկնածութիւնը իսպանական գահի համար միայն շինծու ըստեղծած մի առիթ էր Բիսմարկի կողմից, որ ամեն կերպ աշխատում էր ինչ գնով էլ լինի Նապալէօն III-ին ձգել այդ զարհուրելի պատերազմի մէջ, որը այնքան ցանկալի էր Բիսմարկին: Միւս կողմից, մենք չէինք

հրաժարուել արտաքին թշնամու նուաճողական ձգտումներին «լիմազրելու պարտականութիւնից», — ինչպէս Բերլին է պահանջում իսկական սոցիալիստներից, — այլ և իրանց զբոջակի վրայ գրեցին «հակապաշտպանողականութիւն» (антиоборончество) հշանաբանը, ծաղրեցին մահացիորէն վտանգուած երկիրը պաշտպանողներին (оборонцев) և թշնամու հետ ճակատում «եղբայրանալու» քարոզներ հիւսեցին: Ինտերնացիոնալիզմի անորակելի կեղծարարներն են բոլշեիկները Բերլին վերջ շնտուած տեսակէտով:

Ման. Բ. Ի.

կարող առանց այլ և այլի մերժել պատերազմական կրեդիտը, որպէսզի գրանուով՝ թէկուզ սնուողակի կերպով, չխրախուսէինք Նապօլէօնի քաղաքականութիւնը:

Բայց երբ որ Սեղանից յետոյ չը կնքուեց մեր սպասած խաղաղութիւնը, այլ պատերազմը շարունակուեց էլզաւ-Լօթարինգեան նուաճելու համար, որպէս պատերազմական աւար, մենք սոցիալիստներս ոչ միայն ամենայն հռանդով պայքարեցինք այդ նուաճողական պատերազմի շարունակման դէմ, ալ և Բայխստադում միահամուռ մերժեցինք կառավարութեան կրեդիտները, որոնք անհրաժեշտ էին համարուում պատերազմի շարունակման համար:

Ուզում էին Ֆրանսիայից կտրել իր հրկրի մի մասը: Ճշմարիտ է, այդ երկրամասը երբեմն պատկանել է Գերմանիային և ազգաբնակչութեան մեծ մասը խօսում էր դեռ գերմաներէն, բայց մի բանի դարերի տեղութեան շրջանում այդ ազգաբնակչութեան կեանքն ու կուլտուրան այն աստիճան էին ենթարկուել Ֆրանսիայի ազդեցութեան, որ Գերմանիան խորթացել էր նրանց համար: Եթէ հարցնէք այդ ազգաբնակչութեան՝ ուզում է՞նալի-

նել գերմանական թէ մնալ ֆրանսիական, ապա, ամենայն հաւանականութեամբ, նա միաձայն կարտայայտուէր յօգուտ Ֆրանսիայի: Իւրաքանչիւր ազգ, իւրաքանչիւր ժողովուրդ պէտք է իրանք որոշեն իրանց վիճակը<sup>1)</sup>:

314-2002

1) Դա ժողովուրդների ինքնորոշման այն բարձր սկզբունքն է, որ ուսու Փեարուայիան Յեղափոխութեան յայտարարած վսեմ՝ զգալի փարսերից մէկը կազմեց և դարձաւ յեղափոխական դեմօկրատիայի արտաքին քաղաքականութեան հիմքը: Բայց այդ հարցում ես ուսու բօլշեիկները վաւաճանեցին միջ զգային մեծ սոցիալիստ դէմքերի աւանդած պատուէրներին: Թշուառ Փրազէ շօգները աշխատում էին միայն սին խաբերով իրկել ինքնորոշման սկզբունքի Ֆորմս լը, իսկ փաստօրէն ոտահարեցին նրանք այդ սկզբունքը: Մի կս սակցութիւն և կուսակցական կառավարութիւն, որ պատերազմի ահա որ ըսպէներին հրաժարուում է իր հայրենիքի վտանգուած անկախութիւնն ու ամբողջութիւնը պաշտպանե ուցապա նա դրանով կոխտուում է ամենից առաջ իր մեծ ժողովրդի ինքնորոշման կամքը և միաժամանակ այն մանր ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրաւունքները, որոնք բազմակից են մեծ ժողովրդին միեւնոյն պետութեան մէջ: Թէ ինչ օրի ձգեց բօլշեիկական ոճրագործ աւանտիւրան ուսու, լեն, լատիշ, էստօն, հայ և այլ ժողովուրդներին՝ գերման-թիւրքական արնախում գիշատիչների թաթերի մէջ պատուած այդ զժրազը գոհերին — դա ցոյց տուաւ այն բնական սղբալի վախճանը, որ պիտի ունենար և իրաւ ունեցաւ

## III

Ընդհանրապէս նուաճուած ազգա-  
բնակութիւնը մնում է միշտ յազթող  
ժողովրդի մէջ խորթ ու օտար: Ամե-  
նափայլուն օրինակը կարող է ներկայ  
դէպքում ծառայել Լեհաստանի բաժա-  
նումը: Լեհաստանի վերջին բաժա-  
նումից ՚ի վեր անցել է համարեա 110  
տարի, իսկ լեհ ժողովրդի ձգտումները  
դէպի ազգային անկախութիւն աւելի  
քան կենդանի են նրա երեք (աւստրիա-  
կան, ռուսական և պրուսական) հատ-  
ւածների մէջ էլ: Մի տողուն ժողովուրդ,  
որ ստեղծել է իր լիզուն՝ և իր կուլտու-  
րան, ինչպէս և, հետեապէս, իր նիւթա-  
կան բարեկեցութիւնը, խորտակելու է իր  
ճանապարհը փակող բոլոր խոչընդոտ-  
ները՝ ազգային անկախութեան հասնե-  
լու համար, որովհետեւ միայն վերջինս  
կարող է ապահովել նրա ուրոյն քա-  
ղաքակրթութիւնը: Այնպիսի բացա-  
ռութիւններ, ինչպէս օրինակ Ղվէյցա-  
րական դեմօկրատական հասարակա-  
պետութիւնն է, ուր խաղաղ ապրում են  
կողք կողքի գերմաններ, ֆրանսիա-  
ցիք և իտալացիք միայն հաստատում  
են կանոնը. Շվէյցարիայում ոչ մի

Բրեստ-Լիտովսկիի խաղաղութեան անամօթ  
առևտուրը.  
Մ. Ն. Բ. Ի.

ազգ չի տիրապետում և չի ճնշում  
միւսին: Ընդհակառակը, Աւստրիա-  
յում, իր կիսա-դեպոտական ըէժի-  
մով, բոլոր ազգութիւնները պայքա-  
րում են իրար մէջ. մէկը ուզում է  
տիրապետել միւսի վրայ, իսկ ըէակ-  
ցիօն կառավարութիւնը պահպանում  
է իր գոյութիւնը շնորհիւ միայն ազ-  
գութիւնների այդ փոխադարձ պայ-  
քարի:

Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն դը-  
րանից բղխում է հետեալ եզրակացու-  
թիւնը: Եթէ պատերազմի ընթացքում  
խլում կամ յափշտակւում է մի ժո-  
ղովրդի տերրիտօրիայի որոշ մասը  
կամ մի ազգ ճնշում է միւսին, սօ-  
ցիալիստները պարտաւոր են՝ շնայե-  
լով պատերազմի սարսափներին, նուի-  
րել իրանց բոլոր ոյժերը հայրենի հո-  
ղի պաշտպանութեան համար, ուրիշ  
խօսքով՝ իրանց ժողովրդի պաշտպա-  
նութեան, որին սպառնում է ճրնջ-  
ման ու հարստահարման վտանգը<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Ոսկի են Բեքելի վերեւ բերած սողեքը,  
մանաւանդ ընդգծածս խօսքերը: Թող հայ  
բանուորները մեկնեն իրանց ուղեղում և ան-  
մահացնեն յիշողութեան մէջ իրանց մեծ ու-  
սուցչի և առաջնորդի այդ նուիրական պա-  
տուէրը:

Համեմատեցէր այդ ոսկի սողեքը Լենինի և  
նրա կուսակցութեան այն թունաւոր և հայ-

Վերցնենք հետևեալ օրինակը: Գերմանիան յարձակուամ է Ֆրանսիայի վրայ, որպէսզի նուաճէ նրանից և իւրացնէ նոր հողամասեր, — մի դէպք, որ ոչ ոք չի կարող երեւակայել իրան Գերմանիայում, նոյնիսկ մեր հակառակորդները (նացիօնալիստները) մէջ, — այն ժամանակ մենք ոչ միայն կը մերժենք պատերազմական փոխառու-

ղենատեսց ազիտացիայի հետ, որ ուղղուամ էր հայրենի հողի պաշտպանութեան գաղափարին դէմ Բերելը պահանջում է, որ յարձակման ենթակայ երկրի սոցիալիստն՝ որ նուրի ներանց բոլոր ոյժերը՝ հնայելով պատերազմի սարսափներին, կուռելու այն արտաքին թըշնամու դէմ, որ յախշտակում է իրանց ժողովրդի անբրիտոբիայից որոշ մասեր: Լենինը՝ ը՛ղձակառակը, սոցիալիստի այդ կարգի բարդաքահանութիւնը անուանում է «սոցիալ-իւպերիալիզմ» և դաւաճանութիւն սոցիալիզմի դէմ: Ո՞վ է ճիշտ գտտում. համաշխարհային պրօլետարատի հսչակաւոր վետերան և պարզուրի Բերելը, թէ՛ ուս անարբիստ Լենինը Գնել հարցը, նշանակում է պատասխանել, այնքան պարզ է այն: Ռուս պրօլետարիատի բաւազոյն ուսուցիչը՝ Պլեխանովը, հետեց մարքսիստական ինտերնացիօնալի և նրա փայլուն ներկայացուցիչ Բերելի պատուէրին: Իսկ ուս ժողովուրդը հետեց անարբիտա Լենինի քաղաքականութեան: Հետեանք հրապարակի վրայ է: Երկիրը անուղղելիօրէն կործանուամ է բոլշեիկական քաղաքականութեան միջոցով:

Ծան. Բ. Ի.

թիւնը (կրեդիտը) և կը պայքարենք պատերազմի դէմ,<sup>1)</sup> այլև կատարելապէս բնական կըհամարենք, եթէ մեր ֆրանսիական ընկերները ոտքի կանգնեն, որպէս մի մարդ, և գուրս նետեն մինչ նուաճումները աստիճան պզահ Գերմանիային Ֆրանսիայի սահմաններից<sup>2)</sup>: Սոցիալիստական շարժման նօրմալ դարգացումը անկասկած կա-

<sup>1)</sup> Որպիսի իրօնիա Բերելի մահուանից մի տարի միայն անցամ՝ 914 թ. ամառը, նրա կուսակցութիւնը շատ շուտով է մտանում և դաւաճանում հին վեաերանի պատուէրի դէմ: Յարձակուող Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիան ոչ միայն անկուռ ընդունում է Վիլհելմի կառավարութեան պատերազմական փոխառութիւնները, այլև ակախ մասնակցութիւն է ունենում պատերազմի մէջ. յիշեցէք յայտնի Ֆրանկի աւանտի բան, նրա կամաւոր զնալը և սպանուելը ֆրանսիական ճակատում:

Ծ. ն. Բ. Ի.

<sup>2)</sup> Ահա ինչպիսի վերաբերմունք է յանձնարարել մարքսիստական ինտերնացիօնալի առաքինադարձ ձերուներն դէպի ֆրանսիական սոցիալիստները այն դէպքում, եթէ Գերմանիան յարձակուամ Ֆրանսիայի վրայ: Իսկ պ. Լ. Նիւրը և ընկ. սոցիալիզմի դաւաճաններ և իմպերիալիստներ անուանեցին ֆրանսիական սոցիալիստներին (Գեդէն, Թօմային և այլն), որովհետև նրանք պաշտպանեցին իրանց հանրապետական երկիրը և ազատ ժողովուրդը դէպի Պարիզ արշաւող բեակցիօն Գերմանիայի միապետական զօրքի առաջ: Ոչ միայն այդ: Բօլշեիկները յանդգնեցին նոյն իսկ նահատակ և

խումն ունի տուեալ երկրի. անկախութիւնից. ոչ անկախ և ճշուեամ ժողովրդի մէջ դասակարգային հակասութիւնները և գասակարգերի կոխը չեն կրում ցայտուն արտայայտուած ըը նոյթը<sup>1)</sup>:

Ինձ թւում է, թէ ես պարզ վերլուծել և լուսարանել եմ այս գրութեան

ուերում Բեղիայի լաւագոյն դասկին՝ սոցիալ. կուսակց. պարագոյն ի է. Վանդերվելդին անուանել «իմպերիալիզմին վաճառուած», որովհետեւ նա ազնութիւն ունեցաւ իր խաղաղ ժողովրդի, չեղօքութիւնը խախտուած իր անմեզ հայրենիքի շահն ու պատիւը պաշտպանելու Տեսէք, ուրեմն, թէ ուսւ բոլշեկի անարխիստները որքան հեռու են եր պակաս սօցիալիզմից և պրօլետ. ինտերնացիօնալից:

Ման. Բ. Ի.

<sup>1)</sup> Բերելը իրաւամբ շեղուած է այն հանրածանօթ ճշմարտութիւնը, որ սօցիալիստական շարժումը չի կարող նւրմալ զարգացում ունենալ այն երկրում, որը ենթարկուած է մի այլ պետութեան, գտնուած է սրանից կախուած վիճակի մէջ: Լենին—Տրոցկու կառավարութիւնը, ընդհակառակը. լաիէյական պարաստակամութիւն յայտնեց ընդունել Վիլհելմի կառավարութեան առաջարկած հաշտութեան բոլոր ստրկացնող պայմանները՝ «պարաստ ենք ընդունել ամենամանր դոհաբերութիւնները, միայն թէ վերջ տանք պատերազմին՝ երկրի սօցիալիստական զարգացումը ապահովելու համար»—ասում է բոլշեկիների կառավարութիւնը: Այդ կեղծ ու խեղաթիւրած հասկացողութիւններից և հակասօցիալիս-

մէջ այն դիրքը, որ բռնում են սօցիալիստները դէպի պատրիօտիզմը և ինտերնացիօնալիզմը և այն տակաւիկը, որը նրանք պարտաւոր են պրօլետարիալ պատերազմի դէպքում:

տական քաղաքականութիւնից յետոյ բնական չէ, ընթերցող, երբակացնել, որ ոչ թէ սեփական երկիրը և ժողովուրդը ըլոր դոհաբերութիւններ զնով պաշտպանող սօցիալիստներն են դաւաճաններ և իմպերիալիզմին վաճառուածներ, այլ ծանր սոցիալործներ, հայրենիքի դաւաճաններ և օտար իմպերիալիզմին վաճառուածներ են նրանք, որոնք ստորաբարզ գլուխ են խոնարհում թշնամու սարկական հաշտութեան բոլոր պայմաններին առաջ:

Ման. Բ. Ի.

## Վ Ե Ր Ջ Ա Ր Ա Ն

Ամբողջ քառորդ դար՝ Նոր կամ Երկրորդ Ինտերնացիոնալի հիմնադրութիւնից սկսած մինչև իր մահը (1889—1913 թ.), Աւգուստ Բերելը եղել է բանուորական Ինտերնացիոնալի ամենամեծ առաքեալը, համարուել է Փարքսի և Էնգելսի (Հին կամ Առաջին) Ինտերնացիոնալի ամենահեղինակաւոր աւանդապահը: Սա տարրական իրողութիւն և այբուբենական ճշմարտութիւն է բոլոր նրանց համար, որոնք զոնէ մասամբ ծանօթ են Ինտերնացիոնալի պատմութեան և միջազգային սօցիալիստական կօնգրեսների որոշումներին: Բերելը, որ իր կուսակցութեան մէջ եղել է Ֆրակցիայից ընտրուած մշտական ներկայացուցիչը՝ Բայխտագում կառավարութեան պատերազմական քաղաքականութիւնը և պատերազմական բիւզջէն (Militär-Etat) քննադատելու համար, նոյն Բերելը եղել է Ինտերնացիոնալի քաղաքականութեան մէջ այն կենտրոնական անձնատրութիւնը, որը տոն և ուղղութիւն է տուել միջազգային սօցիալիստական կօնգրեսների յաւկապէս այն որոշումներին, որոնք վերաբերում են պատերազմին և պատերազմող երկրների սօցիալիստական

կուսակցութիւնների բռնելիք զիրքին: Ուրիմն այն տեսակէտը, որ արծարծուած և պարզաբանուած է Բերելը իր գրութեան մէջ, մի սոսկ սօցիալիստ անհատի կարծիք չէ, որքան էլ ականաւոր լինի այդ անհատը, այլ փաստօրէն տեսակէտն է նաև պրօլետարական Ինտերնացիոնալի վարած գործնական քաղաքականութեան:

Բերելի գրուածքը ուշագրութեամբ կարգացող անհրաժեշտօրէն կընկատէ երեք հիմնական մօմենտներ նրա յանձնարարած տակտիկայի մէջ՝ պատերազմի դէպքում:

1. Սօցիալիստների պարտականութիւնն է «ամենամոտապէս անաչառութեամբ» հետադատել և քննել, թէ ինչ երկոյթների հիմքում պիտի որոնել պատերազմի ծագման պատճառները և կուուղ կողմերից ո՞վ է հանդիսանում պատերազմ յայտարարողը և յարձակուողը: Այդ առաջնակարգ մօմենտից սերտ կախումն ունի տուեալ երկրների սօցիալիստների բռնած դիրքի ուղղութիւնը:

2. Այն երկիրը, որ ենթակայ է յարձակման, ասել է՝ զանուում է պաշտպանուողի դիճակի մէջ, այդ երկրի սօցիալիստները պէտք է բոլոր դէպքերում՝ «չնայելով պատերազմի սար-

սափներին, նուիրին իրանց բոլոր ոյժերը հայրենի հողի և ժողովրդի պաշտպանութեան»:

3. Իսկ այն երկիրը, որ կազմում է յարձակուող և նուաճող կողմը, այդ երկրի սօցիալիստները պէտք է ոչ միայն մերժեն պատերազմական կրեդիտը և կուռեն պատերազմի և իրանց երկրի կառավարութեան դէմ, այլև նրանք պիտի միանգամայն բնական և հասկանալի համարեն, եթէ ինքնապաշտպանուող կամ յարձակման ենթակայ երկրի սօցիալիստները ռաբրկանդեն, որպէս մի մարդ և զուրս մզեն յարձակուող երկրի դժբքը իրանց հայրենիքի սահմաններից:

Ահա բանուորական Ինտերնացիօնալի աննման ղեկավարի յանձնարարած տակտիկը սօցիալիստական աշխարհին:

Այժմ հարց է ծագում, արդի համաշխարհային պատերազմի ժամանակ ձեր սօցիալիստները դաւաճանեցին Մարքս-էնգելսի և Բեքել-Փօրէսի Ինտերնացիօնալի աւանդած սօցիալիստական պատգամներին, — որոնք այնպիսի յստակութեամբ արտայայտուած են Բեքելի կենդանի խօսքերի մէջ, — և ձեր սօցիալիստները մնացին հաւատարիմ այդ պատգամներին:

Մարքսիստական Ինտերնացիօնալին դաւաճանեցին առաջին կէտում նրանք, որոնք չցանկացան ոչ պատերազմի ծագման պատճառները սուսինասիրել, ոչ նրա բռնկման առիթների աստուղը քրքրել և ոչ էլ պատասխանատուներ որոնել կուռող երկրների շարքում: Այդպիսի մի դերք բռնեցին բօլշեիկները և առհասարակ ցիմմերվալդիստները Ռուսիայում, իսկ այդ դերքը ձեռնտու էր միայն և բացառապէս Գերմանիայի համար — որի տնտեսական զարգացման օբեկտիւ յարարելու թիւններով է բացատրուում պատերազմի ծագման պրօբլեմը — և վերմանական կառավարութեան համար, որը յայտարարեց և առաջինը սկսեց պատերազմը: Ահա այդ է պատճառը, որ բօլշեիկական «Ինտերնացիօնալիզմը» ամենայն իրաւամբ կարելի է անուանել վերջին հաշուով վերմանական իմպերիալիստական շահերի օբեկտացիա կամ կեղծ ինտերնացիօնալիզմ:

Երկրորդ կէտում ևս դաւաճանեցին բօլշեիկները Բեքելի այն յանձնարարած տակտիկային, որ յարձակման ենթակայ և ինքնապաշտպանութեան վիճակի մէջ գտնուող երկրի սօցիալիստները պիտի բոլոր ոյժերով նուիրուեն հայրենի հողի և ժողովրդի պաշտպա-

նութեան գործին: Բօլշեիկները արհամարհեցին պաշտպանութեան տեսակէտը, յայտարարեցին իրանց հակապաշտպանողականներ (антиоборонцы), նոյնիսկ ազատ ու դեմօկրատիկ երկրի շահերի հանդէպ այն մօտենտին, երբ արտաքին բռնակալ թշնամին նուաճել ու բազմել էր երկրի համեղ կըտորների վրայ և ստրկացման վտանդ էր սպառնում նրան: Այդ թշնամուն երկրի սահմաններից դուրս մղելու փոխարէն, ինչպէս Բեքելն է յանձնարարում, քօլշեիկները, ընդհակառակը, թշնամու հետ եղբայրանալու քարոզներ կարդացին և վերջում ստորաքարշ աղախնի պատրաստակամութեամբ ընդունեցին թշնամու թիւօղբած խաղաղութեան բօլոր ստրկական պայմանները:

Երրորդ կէտում Բեքելի Ինտերնացիօնալի տեսակէտին դաւաճանեց գերմանական սօցիալ-դեմօկրատիայի մեծամասնութիւնը (Շայդեմանի Ֆրակցիան), որ ոչ միայն չկոտեց իր նախադարձակ երկրի կառավարութեան դէմ, այլև ընդունեց վերջնիս առաջարկած պատերազմական գրեթէ բոլոր փոխառութիւնները:

Ընդհակառակը, գաղնակից երկրների սօցիալիստական կուսակցութիւն-

ները միանգամայն հաւատարիմ մնացին բանուորական Ինտերնացիօնալի աւանգութիւններին և՛ իբրև յարձակման հնթակայ կամ պաշտպանուող երկրների քաղաքացիներ, իրանց սըրքազան պարտքը կատարեցին հայրենի հողի և ժողովրդի շահերի առաջ, դիմեցով Բեքելի յանձնարարած տակտիկային: Այդպէս վարուեցին Ֆրանսիայի, Բելգիայի, Անգլիայի և այլ գաղնակից երկրների սօցիալիստները: Ռուսիայում նոյն գիրքը բռնեցին Պլեխանովի գրուպպան, մենշեիկ պաշտպանողականները՝ Պօտրեսովի և Մասլովի գըլխաւորութեամբ և սօց.-իւղ. պաշտպանողականները: Գերմանիայում Բեքելի գազափարային աւանդին հաւատարիմ մնաց սօցիալիստների մի փոքրէկ խմբակ (Լիբկնիխտ, Մերինզ, կաուցկի, Բերնշտայն և այլն), որոնք նախադարձակ Գերմանիայի կառավարութեան դէմ իրանց բացասական և ժըխտական գիրքը բռնեցին:

Ինտերնացիօնալի սկզբունքներին ամենամեծ և ամենբիլի չափերով դաւաճանեցին քօլշեիկները, որոնք հաւատարիմ չմնացին նոյն իսկ իրանց «պաշտած» ցիմմերվալդիին. ուսական, Ֆրանսիական, անգլիական և գերմանական ցիմմերվալիստներն

անգամ բուն կերպով բողոքեցին բօլշեիկների դէմ, իբրև «ցիմմերվալի գաւաճանների»:

Այդպէս, ցնցուել է ողջ Ինտերնացիօնալը, բողոք ու քննադատութիւն տեղում են ամեն կողմից սօցիալիզմի դրօշակը արատաւորոյ անարխիստների և գաւաղիւններիդէմ: Բօլշեիկը նստած է մեղադրական նստարանի վրայ, որպէս ծանր յանցագործ և սպասում է իր մահուան դատավճռին:

Իա վաղուց պէտք է լինէր: Բայց լաւ է ուշ, քան երբէք:

Բ. Դ.



«Ազգային գրադարան»



NL0202255

Արտատպւած «ԲԱՆԻՈՐ» թերթից.

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Հոյս տեսաւ և Վաճառուով է  
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ

„ԴԻՄԱԿՆԵՐԸ  
ՊԱՏՌՈՒԱԾ“  
(ՈՎԳԵՐ ԷՆ ԲՕԼՇԵՎԻԿՆԵՐԸ)

Գինն է 2 րուբլի.

Դիմել՝ „Посредникъ“ և „Сегаль“,  
գրախաճառներին: